

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 2

ՀՀ Լոռու մարզպետի մոտ կայացած խորհրդակցության

21.01.2019թ.

ք.Վանաձոր

Մասնակցում էին

- Ա.Հովսեփյանը - մարզպետի տեղակալ
- Վ.Խաչատրյանը - գլխավոր քարտուղարի պաշտոնակատար
- Ա.Բեջանյանը, Ա.Մխիթարյանը, Ռ.Հարությունյանը, Ա.Ջանազյանը, Դ.Մանուչարյանը, Ա.Շահվերդյանը, Ա.Օհանյանը, Լ.Բերոյանը, Ա.Սահակյանը, Հ.Հակոբյանը Ա.Աղլոյանը, Ս.Ղուբաթյանը, Ա.Եղիազարյանը, Հ. Մկրտչյանը - ստորաբաժանումների ղեկավարներ և այլ պաշտոնատար անձինք
- Լ.Ասլանյան -մարզպետի խորհրդական
- Լ.Տեր-Սիմոնյանը -մարզպետի խորհրդական
- Գ.Մարկոսյանը - մարզպետի օգնական
- Ռ. Խանզադյանը - մարզպետի օգնական

Օր ա կ ա ր գ ու մ՝

1. Նախորդ շաբաթվա ընթացքում կատարված աշխատանքների ամփոփում

/Ջեկ. մարզպետի տեղակալներ,
գլխավոր քարտուղարի տեղակալ,
ստորաբաժանումների ղեկավարներ/

2. Մարզպետարանի ստորաբաժանումների առաջիկա շաբաթվա ընթացքում կատարվելիք աշխատանքների մասին

/Ա.Ղուկասյան/

3. Այլ հարցեր

Հ ա ն ձ ն ա ր ա ր վ ե ց

1. ՀՀ մարզպետի տեղակալ Ա.Հովսեփյանին, ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ տնտեսական զարգացման վարչության պետի պաշտոնակատար Ա.Բեջանյանին և մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Դ.Մանուչարյանին՝

Մեկշաբաթյա ժամկետում կազմակերպել քննարկում 2018թ. ցուցանիշներով ցածր հավաքագրում ունեցող համայնքների ղեկավարների հետ և ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

2. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներին՝

ա) Ստորաբաժանման կողմից կամ ստորաբաժանման մասնակցությամբ իրականացվող միջոցառումների վերաբերյալ նախօրոք տեղեկացնել համապատասխան անձանց.

բ) Հնգօրյա ժամկետում ներկայացնել առաջարկություններ Լոռի-Մարտակերտ համագործակցության ծրագրերի վերաբերյալ:

3. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ տնտեսական զարգացման վարչության պետի պաշտոնակատար Ա.Բեջանյանին՝

500 000 դրամից ավել պարտավորություն ունեցող անձանց վերաբերյալ համեմատական տեղեկատվություն ներկայացնել մինչև ս.թ. փետրվարի 1-ը:

4. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Դ.Մանուչարյանին՝

Անհրաժեշտ հսկողություն սահմանել համայնքների բնակչության մասնակցության ապահովման նկատմամբ համայնքների ղեկավարների կողմից հաշվետվությունների ներկայացման ընթացքում:

5. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետ Ա.Եղիազարյանին՝

Մեկշաբաթյա ժամկետում ուսումնասիրել և ներկայացնել առաջարկություններ Վանաձորի մանկատանը գտնվող երեխաների հետագա խնամքի կազմակերպման վերաբերյալ:

6. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության բաժնի պետ Ա.Շահվերդյանին՝

Մինչև փետրվարի 1-ը ներկայացնել տեղեկատվություն և առաջարկություններ համայնքների անասնաբույժերի ընդունման և նրանց հետ պայմանագրերի կնքման վերաբերյալ:

 Invalid signature

X 

ԱՆԴՐԵՅ ԴՈՒԿԱՍՅԱՆ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ա.ԴՈՒԿԱՍՅԱՆ